ՀՈՒՄԱՆԻՏԱՐ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԹԱՂՄԱՆ ԾԵՍԻ ՄԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ[1]

ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ
պատ. գիտ. թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան
Հայ-ռուսական համալսարանի
արևելագիտության ինստիտուտ
hayk.hakobyan.88@mail.ru

ԱՐՄԻՆԵ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
պատ. գիտ. թեկնածու
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Երևանի պետական համալսարան
arminegabriel.iae@gmail.com

ՀՏԴ՝ 393; 393.05
DOI:10.54503/1829-4278.2023.2-108

Ամփոփագիր

Հոդվածում ուսումնասիրվում է Հայաստանի հանրապետությունում տարածված մի հետաքրքիր երևույթ՝ գերեզմանների վրա շիշ, կերամիկա ջարդելու սովորույթը, որն ուղղակիորեն ներկայում կապված է նահատակների, այդ թվում՝ լենին-ստալինյան տեռորի զոհերի գերեզմանների սրբազնացման հետ, ինչպես նաև բնորոշ է հոգեհացի ծիսակատարությանը ՀՀ Սյունիքի մարզում և Արցախում: Քննության առնելով վերոնշյալ երևույթը՝ կարելի է եզրակացնել, որ գերեզմանների շուրջ և դրանց վրա շիշ, կերամիկա ջարդելու սովորույթը խորհրդանշում է որոշակի անցում, վերափոխում՝ սահմանային վիճակ այս ու անդրաշխարհի միջև: Այդ սովորույթն ունի հնագույն արմատներ ու թերևս զուտ հայկական երևույթ չէ, այլ բնորոշ է ողջ Մերձավոր Արևելքին: Հո-

1 Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6A272 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

գեհացի ժամանակ ներկայում ՀՀ-ում նման երևույթ կա Սյունիքում և Արցախում: ՀՀ այլ մարզերում շիշ և կերամիկա ջարդելու սովորույթը կիրառվում է նահատակների և սպանված մարդկանց գերեզմանների շուրջ և դրանց վրա:

Բանալի բառեր. շիշ և կերամիկա ջարդել, նահատակներ, անտիկ դամբարաններ, հայեր, հույներ, ասորիներ, հրեաներ

Ժողովրդական քրիստոնեության ծիսական մշակույթի դրսևորումներից է գերեզմանների վրա շիշ և կերամիկա ջարդելու սովորույթը, որը ներկայում ուղղակիորեն կապված է նահատակների, այդ թվում՝ լենին-ստալինյան տեռորի զոհերի գերեզմանների սրբազնացման հետ: Ուստի առաջանում է այդ երևույթի համեմատական դիտարկման գիտական անհրաժեշտություն՝ վերոնշյալ դրսևորման ակունքներին հնարավորինս մոտենալու համար:

Խեցեղեն ջարդելը և նահատակների գերեզմանների պաշտամունքը

Այսպես, նախ դիտարկենք այս երևույթի ժամանակակից դրսևորումները: Ինչպես նշեցինք, գերեզմանների վրա շիշ, կերամիկա ջարդելու սովորույթն այժմ առնչվում է նահատակների, սպանված մարդկանց գերեզմանների մոտ ու վրա տեղի ունեցող ծիսապաշտամունքային համալիրին: Հավաքելով մի շարք պատմություններ Շիրակի, Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի, Արմավիրի, Արագածոտնի և Սյունիքի մարզերից[2], խորհրդակցելով ազգագրագետ գործընկերների[3] հետ՝ առանձնացնենք նորօրյա նահատակների գերեզմանների պաշտամունքին բնորոշ հիմնական գծերը.

2 Նման հրաշագործ, վախ բռնող գերեզմանների ուսումնասիրություններ կատարվել են Արտաշատ, Վարդենիս, Մարտունի քաղաքների գերեզմանոցներում, Ապարանի Սուրբ Աստվածածին եկեղեցու շրջակայքի գերեզմանոցում, Օշական, Անգեղակոթ, Բռնակոթ Լուսաշող գյուղերում, Շիկահող գյուղի Սուրբ Ստեփանոս Նախավկա եկեղեցու շուրջ գտնվող գերեզմանոցում և այլուր:

3 Արժեքավոր դիտարկումների համար երախտագիտություն ենք հայտնում ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատողներ, պ.գ.թ. Լիլիթ Սիմոնյանին և պ.գ.թ. Կարեն Հովհաննիսյանին:

ա. Այդ նահատակների գերեզմանները պարտադիր, որ պատկանեն հոգևորականի կամ ստալինյան աստվածամերժության տարիների զոհի, սակայն պարտադիր պայման է, որ գերեզմանում ամփոփված մարդու դիակը բռնության զոհ լինի:

բ. Գերեզմաններին այցելության են գալիս հիմնականում վախի, ընկնավորության, հոգեկան ու հոգեբանական խնդիրների դեպքում:

գ. Գերեզմանների վրա պարտադիր կերպով կոտրում են շիշ, ապակի, խեցեղեն որևէ իր՝ այդ պահին «հիվանդին» անակնկալի բերելու ձանապարհով «բուժելու» համար:

Այս երևույթի վերոգրյալ կետերը, որոնք բնորոշ են նաև մյուս վայրերում հավաքված պատմություններին, համալիր կերպով ներկայացնում է երեխա հասակում նման կերպ վախերից «բուժված» Անահիտ Ոսկանյանը. «Մեր գյուղում՝ Բռնակոթում, մի գերեզման կա, «Շագյալդու հանգիստ» են ասում: Այնտեղ տանում, նույն եղանակով վախ են չափում: Լսել եմ, որ նրան դաժանաբար սպանել են, բայց երևի հոգևորական չի եղել: Իմ վախը մորաքույրս է չափել այնտեղ: Ջրով լցված շիշ վերցրեց հետը, գնացինք գերեզման: Հայր մերն ասաց, ջրից մի քանի կում խմեցի, երեք անգամ խաչակնքեցինք, գերեզմանի շուրջը սկսեցինք պտտվել, ինքն իմ հետևից էր գալիս ու անսպասելի շիշը խփեց քարին, ջարդեց: Ես մտքերի մեջ ընկած էի քայլում, անակնկալից վեր թռա: Մորաքույրս ասաց. «Վերջ, սրթսրթացիր՝ վախդ անցավ»: Գերեզմանի կողքերը բազմաթիվ ջարդված շշերի կտորներ կային: Մորաքույրս ասաց, որ գերեզմանում թաղվածը մահից առաջ տանջվել է, ինքն էլ է վախեր զգացել, քեզ կօգնի, որ քո վախին հաղթես: Մորաքույրս հիմա մահացել է, անունը՝ Վիկտորյա Դիլանյան, կարծեմ 1940 թիվ էր»[4]: Շիշ կոտրելով բժշկվելու համար մարդիկ այցելության են գալիս նաև 1946 թ. նահատակված տեր Ռաֆայել ավագ քահանա Տեր-Հարությունյանի՝ Ապարանի Ս. Աստվածածին եկեղեցու մոտ գտնվող գերեզմանին[5]:

Խնդրի համատեքստում հետաքրքրական է Գ. Սմբատյանի հաղորդածը: Ըստ նրա՝ մինչև 1970-ականները հատուկ ուշադրության,

4 Ասացող՝ Անահիտ Ոսկանյան, 1970 թ., Հակոբյան Հ., Դաշտային ազգագրական նյութեր, 2021, օգոստոսի 5, 15 րոպե:

5 Ասացող՝ անանուն, Հ. Հակոբյան, Լ. Սիմոնյան, Կ. Հովհաննիսյան, Դաշտային ազգագրական նյութեր, 2021 թ., հունիսի 10, 30 րոպե:

խնամքի ու պաշտամունքի է արժանացել ձեմարանավարտ Սուլթան Տեր-Գևորգյանի կամ Արքայիկի գերեզմանը: Արքայիկը ստալինյան վարչակարգի զոհերից է, ում թողած ժառանգությունը ևս ոչնչացվել է 1925 թ.: Իսկ ստալինյան բռնաձնշումների զոհ Տեր Մովսես քահանա Մելիք-Նուբարյանի գերեզմանի վրա մինչ օրս նաև մոմավառություններ են կատարվում: Գ. Սմբատյանը հոգևորականի գերեզմանի պաշտամունք է հիշատակում նաև Գորիս քաղաքում, սակայն դա հետագա ձշգրտումների կարոտ է[6]:

Նահատակի գերեզմանի վրա շիշ ջարդելը ժամանակակից երևույթ չէ. այն առկա էր առնվազն 19-րդ դարում: Այսպես, Զմյուռնիայում էր գտնվում Սամուել Մանիսացու գերեզմանը, որի վրայի 1723 թվականի արձանագրությունը փաստում է հանուն հավատի նրա գլխատվելու մասին: Զմյուռնիայի թե՛ հայ, թե՛ հույն բնակչությունը սովորություն ուներ ջերմելիս գերեզմանի մոտ գտնվող հողից պատրաստված սափորից և գերեզմանաքարի մոտ գտնվող զանգակատան ջրհորից ջուր վերցնելու: Այն լցնում էին տապանի վերին անկյունում գտնվող փոքր խոռոչների մեջ, չոքում, խմում այդ ջրից, ապա ջարդում սափորը տապանի վրա՝ հուսալով, որ ջերմը կանցնի[7]: Հետաքրքիր է, որ կավե անոթ ջարդելու սովորույթը բնորոշ է եղել ոչ միայն հայերին ու հույներին, այլև ասորիներին: Արևելքի ասորական եկեղեցում թաղման հաջորդ օրը հատուկ հանգուցյալի համար պատրաստված կավե անոթի մեջ ջուր են լցնում, ապա քահանան ընթերցում է ջուրն օրհնելու աղոթքը (Ցողի՛ր մեզ վրա, տեր մեր Աստուած, մեզ վրա քո սիրո մասնիկից և դրանով մաքրիր մեր մեղսավոր ախտերը, օ, բարի հովիվ, որը լույս եկավ, որ փրկի մեզ, և ուզում է, որ մենք հետ դառնանք ու լինենք իրենը: Թող մեր աղոթքը, ո՛վ Տեր, լինի քեզ համար որպես հանգստություն ...), և «հանգստություն» բառը կարդալու պահին հանգուցյալի տապանաքարի վրա կոտրում են կավե անոթը, հետո փշուրները վերցնում են, տապանաքարի վրա ներքևից վերև երեք անգամ խաչ անում՝ որպես հարության խորհրդի նշան[8]:

---

6 Ասացող՝ Գրիշա Սմբատյան, 1957; Հակոբյան Հ., Դաշտային ազգագրական նյութեր, 2022, հուլիսի 17, 5 բոպե:

7 **Մանանդեան Հ., Աճառեան Հր.,** *Հայոց նոր վկաներ,* Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1903, էջ 560-561:

8 Ասացող՝ Արևելքի ասորական եկեղեցու քահանա, քորեպիսկոպոս Նիկադիմ Յուխանան, 1988; Ա. Օհանջանյան, Շ. Խաչատրյան, Գ. Հարությունյան, Հ.

Գերեզմանաթմբերի վրա խեցեղեն ջարդելը ուշ բրոնզեդարյան և անտիկ շրջանում

Մնդրաղառնանք վերոնշյալ՝ գերեզմանների կամ գերեզմանաթմբերի վրա շիշ, ապակի կամ խեցեղեն կոտրելու երևույթին, որն ընդունված է Հայկական լեռնաշխարհում դեռևս ուշբրոնզեդարյան շրջանից[9]: Նշյալ շրջանում, ինչպես նաև երկաթի դարաշրջանում գերեզմանաթմբերի վրա դիտավորյալ խեցեղեն կոտրելու բազմաթիվ վկայություններ կան: Իրերի ծիսական ջարդումը, հավանաբար, նպատակաուղղված էր ննջեցյալի վերածննդին[10]՝ խորհրդանշելով անդրսահմանային վիճակ կամ անցում մի վիճակից մեկ այլ վիճակի[11]: Իրը, գույքը կոտրելու դրդապատճառը, թերևս, այն համոզումն է, որ այնկողմնային աշխարհում իրերը կարող են ծառայել իրենց նպատակին կամ իրերի, գույքի դիտավորյալ կոտրումը այն աշխարհում լսելի, ընդունելի կարող է համարվել միայն դրանց ամբողջականությունը կորցնելուց հետո: Այս համատեքստում նորագույն վկաների կամ նահատակների գերեզմանների շուրջ շիշ ջարդելը տրամաբանական է թվում: Հայկական լեռնաշխարհում գերեզմանների վրա անոթների ջարդելը բնորոշ է նաև հելլենիստական շրջանին, մասնավորապես կիրառվել է Կարճաղբյուրում՝ հոգեհացի ծեսի ժամանակ[12]:

Հայաստանում, ինչպես նաև այլ երկրներում, դամբարաններում ամենավաղ շրջանից սկսած հայտնաբերվել են տարբեր տեսակի անոթներ, որոնց մեջ եղել է մահացածի բաժին ուտելիքը: Անտիկ շրջանում դիակիզման և անհատի թաղման արարողության ժամանակ տեղում երբեմն կատարվել են զոհաբերություններ, և հոգեհաց է տրվել: Այս երևույթի մասին են վկայում, օրինակ, Արտաշատի դամբարաններում հայտնաբերված իրերը և կենդանական ոսկորների մնացորդները: Ըստ Ժ. Խաչատրյանի՝ Սիսիանի և Արտաշատի դամբարաններում

Հակոբյան, Դաշտային ազգագրական նյութեր, 2022, դեկտեմբերի 18, 15,3 րոպե:

9 **Թումանյան Գ.,** Աշտարակի Խոջարաղերի ուշ բրոնզեդարյան գերեզմանները, *ՊԲՀ*, հ. 1, 1999, էջ 249–262:

10 **Церен Э.,** *Библейские холмы,* Москва, Изд. «Наука», 1966, с. 364, 385.

11 **Пропп В. Я.,** *Исторические корни волшебной сказки,* Ленинград, Изд. Ленинградского университета, 1986, с. 349.

12 Տվյալները տրամադրել է պ. գ. թ. Ինեսա Կարապետյանը, որի համար երախտապարտ ենք:

վավերացվել է հոգեհացի մի դրսևորում, որի ժամանակ կենդանիներին մորթել են զոհասեղանի վրա, միսը կերել, իսկ մնացորդները նետել կրակի մեջ: Հոգեհացի համար բերված բոլոր ամանները ջարդել և նույնպես նետել են կրակի մեջ կամ զերեզմանի վրա, ուստի նույն անոթի բեկորները հաճախ գտնվել են դամբարանի տարբեր մասերում: Արտաշատի դամբարաններից մի քանիսում և դամբարանադաշտի տարածքում գտնվել են նաև երկայնքով կիսված ջրի փողրակներ, ամանների կիսակլոր բեկորներ, որոնք, ըստ հետազոտողի, հավանաբար, օգտագործվել են ստորերկրյա աստվածներին նվիրված զոհաբերության արարողությունների ժամանակ[13]:

Զոհաբերության, հոգեհացի ծիսակատարությունների հին լինելու մասին են վկայում թաղման արարողությունների մասին խեթական տեքստերը: Դրանցում հիշատակվում է, որ կենդանիների, գինու, գարեջրի, հացի և մրգերի զոհաբերությունից հետո կոտրատում էին անոթները[14]:

Մեր դիտարկումները ցույց են տվել, որ Հայաստանի անտիկ շրջանի դամբարաններում երբեմն միտումնավոր վնասված և կոտրած իրեր են դրվել: Այսպես, 2022 թ. Գառնիի փրկարարական պեղումներով հայտնաբերված սալարկղային թաղման գույքի՝ երկու փոքր անոթների շուրթերը վնասված էին, իսկ կոտրած երկաթե մկրատի մասերը միմյանցից ոչ շատ հեռու դրված[15]: Նման դեպք է արձանագրվել նաև Արցախի Տիգրանակերտի Արևելյան դամբարանադաշտում 2016 թ. պեղված քարարկղային դամբարանում, որտեղ insitu վավերացված կրկնակի թաղման ուղեկցող նյութի՝ հորիզոնական բռնակով սափորի շուրթի մի մասը բացակայում էր, իսկ միևնույն դամբարանի մուտքի մոտ դրված էր կիսված փոքր թաս[16]: 2017 թ. Հյուսիսային պարսպապատից ներս հայտնաբերված կարասային թաղման մեջ գտնվել է նախա-

---

13 **Խաչատրյան Ժ.,** *Արտաշատ II,* Երևան, ՀՍՍՀ ԳԱ. Հնագիտ. և ազգագր. ինտ, 1981, էջ 52–53:

14 **Костанян Е.,** Обряд тризны в Боспорских курганах, *Советская археология,* т. 14, 1950, с. 126.

15 Նյութերը՝ ըստ Արմինե Գաբրիելյանի Գառնիում կատարած պեղումների (անտիպ):

16 Տիգրանակերտի արշավախմբի ղեկավար, հնագետ պ.գ.դ. Համլետ Պետրոսյան: Թաղման ծեսի տվյալ դրսևորումը, որն արտահայտված է խեցեղեն նյութի կանխամտածված կոտրել–վնասելով, քննության է առել պեղող հնագետ Արմինե Գաբրիելյանը:

պես կոտրած, երեք մասի բաժանված երկաթե մկրատ և հայելու կտոր: Այս երևույթը բնորոշ էր ոչ միայն խեցեղեն և մետաղե իրերին, այլև զարդերին և կնիքներին: Նույն երևույթի դրսևորում կարելի է համարել անտիկ շրջանի դամբարաններում հայտնաբերված, նախապես մեջտեղից կիսված կապույտ ապակուց ձուլված բազմանիստերը: Թաղման գույքի դիտավորյալ, կանխամտածված ձևափոխման, կոտրել-վնասելու նման օրինակները Հայաստանի տարածքում շատ են, սակայն ցայսօր այդ հարցին նվիրված հատուկ հետազոտություն դեռևս չի իրականացվել:

Դամբարաններում նախապես վնասված և կոտրած իրեր դնելու սովորույթը բնորոշ է եղել նաև մ.թ.ա. 4-րդ հազ. թվագրվող Մայկոպյան մշակույթին[17] և Դաղստանի աղվանա-սարմատների շրջանի հուշարձաններին[18]: Այդ ծեսն ուներ վերածնության մոգական նշանակություն, ընդ որում՝ մոգական նշանակություն էին ստանում նույնիսկ կոտրած անոթների խեցատները: Այսինքն՝ իրը պետք է իր տիրոջը հետևելով՝ «մահանար», իսկ հետո նրա հետ վերածնվեր: Միևնույն ժամանակ այստեղ առկա է «pars pro toto»՝ «մասն ամբողջի փոխարեն» բանաձևի կիրառումը:

Հարցի աստվածաշնչյան և աստվածաբանական կողմը

Հետաքրքրական է ևս մի փաստ. նահատակի կամ ապագա նահատակի գերեզմանի մոտ անոթ կոտրելու մասին շատ բնութագրական է Նոր Կտակարանում Հիսուս Քրիստոսի մահվանը նախորդող դրվագը. «Եւ մինչ նա Բեթանիայում էր, բորոտ Սիմոնի տանը սեղան նստած, եկաւ մի կին, որ հետն ունէր նարդոսի ազնիւ, մեծարժէք իւղի մի շիշ. եւ շիշը կոտրելով՝ իւղը թափեց Յիսուսի գլխին: Աշակերտները զայրացան եւ ասացին. «Այդ իւղը ինչո՞ւ այսպէս պիտի կորչէր. կարելի էր այդ անուշահոտ իւղը վաճառել աւելի քան երեք հարիւր դահեկանի եւ տալ աղքատներին»: Եւ խիստ զայրանում էին կնոջ վրայ: Եւ Յիսուս նրանց ասաց. «Թո՛յլ տուէք դրան. ինչո՞ւ էք նեղութիւն տալիս, որովհետեւ նա ինձ համար մի բարի գործ արեց: Ամէն ժամ աղքատներին ձեզ հետ ունէք եւ երբ ուզենաք, կարող էք նրանց բարիք անել: Բայց ինձ ամէն ժամ ձեզ

17 **Кореневский С. Н.,** Традиция порчи сосуда: истоки по данным археологии предкавказья, *История, археология и этнография Кавказа*, т. 17 (4), 2021, с. 886–911.
18 **Бакушев М. А.,** Обряд порчи инвентаря в погребальных памятниках Дагестана албано-сарматского времени, *Вестник института ИАЭ*, 3, 2005, с. 42–50.

հետ չունէք: Դա, ինչ որ կարող էր, արեց. առաջուց խնկաւետեց իմ մարմինը ի նշան պատանքուելու (Մարկ. ԺԴ.3-9)»: Ինչպես տեսնում ենք, Ավետարանի այս հատվածում նկարագրվում է, թե ինչպես կինը մեղքերից ազատվելու ու Քրիստոսին երկրպագելու համար կոտրեց շիշը և նարդոսի յուղը թափեց Նրա գլխին: Քրիստոսի մեկնաբանության համաձայն, ինչպես երևում է ավետարանական դրվագում, դա խորհրդանշեց Իր մոտալուտ մահը, և գուցե թե այստեղ գործ ունենք մերձավորարևելյան մի ծիսական ավանդույթի հետ, որ բնորոշ է եղել տարբեր ժողովուրդների, այդ թվում՝ հայերին, ու մինչ օրս դարերի բովով անցնելով, վստահաբար նաև ձևափոխումների ենթարկվելով, բայց հիմնական նշանակությունը պահպանած հասել է մեզ՝ իր ժողովրդական վերոբերյալ դրսևորումներով: Նահատակների գերեզմանների վրա շիշ և կերամիկա ջարդելու երևույթին զուգահեռ կա նաև ողորմաթասը ջարդելու երևույթը, որ նկատվել է Սյունիքում և Արցախում: Կարծում ենք՝ այս ավանդույթը կարոտ է հետագա մանրամասն քննության, և այստեղ միայն կանցկացնենք հետևյալ զուգահեռները.

1. Եվ Քրիստոսի, և նահատակների դեպքում կա բռնի մահ:
2. Երկու դեպքերում էլ անոթի մեջ հեղուկ է. մի դեպքում՝ նարդոսի յուղ, մյուս դեպքում՝ ջուր:
3. Եվ Քրիստոսի, և նահատակների դեպքում անոթը բերող անձինք գալիս են թերևս մեղքերը քավելու, ապաշխարելու ու որպես մեղքի հետևանք դիտարկվող հիվանդությունների բուժման, ինչպես նաև մարդու՝ մի վիճակից մեկ այլ վիճակի անցումն ապահովելու համար:
4. Խեցեղեն, շիշ ու այլ իրեր կոտրելն ընկալվել է որպես չարխափան, դիվահալած երևույթ, ու թերևս պատահական չէ, որ և Քրիստոսի դեպքում, և նահատակների գերեզմանների վրա մարդիկ ջարդել են շիշ, խեցեղեն և այլ կոտրվող իրեր:
5. Քրիստոսի նկատմամբ կատարված այդ գործողությունը և սրվակը Քրիստոսի վրա կոտրելը հնարավոր է, որ օրինակ է եղել՝ լեգիտիմացնելու քրիստոնյա նահատակների գերեզմանների վրա կատարվող վերոնշյալ գործողությունները:
6. Ի տարբերություն նահատակների գերեզմաներին ապակի, բաժակ, կերամիկա ջարդելուն՝ «սովորական» հագուցյալների դեպքում հիմնականում միանգամյա գործողություն է:

Եզրակացություն

Այսպիսով կարելի է եզրահանգել, որ

1. Գերեզմանների շուրջ և դրանց վրա շիշ, կերամիկա ջարդելու սովորույթը խորհրդանշում է որոշակի անցում, վերափոխում՝ սահմանային վիճակ՝ այս ու անդրաշխարհի միջև:

2. Այդ սովորույթն ունի հնագույն արմատներ, ու, թերևս, զուտ հայկական երևույթ չէ, այլ բնորոշ է ողջ Մերձավոր Արևելքին:

3. Մեր օրերում ՀՀ-ում հոգեհացի ժամանակ նման երևույթ կա Սյունիքում և Արցախում, իսկ ՀՀ այլ մարզերում շիշ, կերամիկա ջարդելու սովորույթը կիրառվում է նահատակների և սպանված մարդկանց գերեզմանների շուրջ և դրանց վրա:

ABOUT THE TRANSFORMATION OF A BURIAL RITUAL

HAYK HAKOBYAN
PhD in History
Institute of Archaeology and Ethnography, NAS RA
Matenadaran after Mesrop Mashtots
Institute of Oriental Studies, Russian-Armenian University

ARMINE GABRIELYAN
PhD in History
Institute of Archaeology and Ethnography, NAS RA
Yerevan State University

Abstract

During field research, we observed an interesting tradition, namely the breaking of glass bottles and ceramics on gravestones, which is directly linked to the sacralization of graves of martyrs, including victims of the terror under Lenin and Stalin. This tradition is also inherent in the memorial service ritual in Artsakh, and Syunik Region of the Republic of Armenia. Analyzing it, one can infer that the breaking of glass bottles and ceramics on and around tomb stones symbolizes a certain transition, transformation, a liminal state from the world of the living to the world of the dead. Probably, this tradition which has ancient roots is common not only among Armenians but also in the entire Middle East. In present-day Armenia, it observed in Artsakh and Syunik during memorial services, while in other provinces of Armenia, the ritual is performed on and around the gravestones of martyrs and people who were killed.

Keywords: bottle/ceramic breaking, martyrs, Hellenistic tombs, Armenians, Greeks, Assyrians, Jews

ПО СЛЕДАМ ТРАНСФОРМАЦИИ ОДНОЙ ОСОБЕННОСТИ ПОГРЕБАЛЬНОГО РИТУАЛА

АЙК АКОПЯН
канд. ист. наук
Институт археологии и этнографии НАН РА
Матенадаран имени Месропа Маштоца
Российско-Армянский университет, Институт Востоковедения

АРМИНЕ ГАБРИЕЛЯН
канд. ист. наук
Институт археологии и этнографии НАН РА
Ереванский государственный университет

Резюме

Во время полевых исследовательских работ мы заметили одно интересное явление: традицию разбивать на кладбищах стеклянную бутылку, керамику, что сейчас на прямую связано с сакрализацией могил мученников, в том числе и жертв ленино-сталинского террора. Это явление присуще и ритуалу поминок в Арцахе и Сюникском марзе республики Армения. Анализируя вышеуказанное явление, можно умозаключить, что традиция разбивания вокруг кладбищ и на кладбищах стеклянных бутылок, и керамики, символизирует некий переход, трансформацию, пограничное состояние – из мира живых в мир мертвых. Это традиция имеет древнейшие корни, и скорее всего не является локальным явлением, а присуще всему Ближнему Востоку. Сейчас в республике Армения такое явление было и есть в Арцахе и Сюнике, во время поминок, а в других провинциях Армении данное явление просматривается только на кладбищах мучеников и убитых людей.

Ключевые слова: разбивание бутылок и керамики, мученики, элиннистические гробницы, армяне, греки, айсоры, евреи

Գրականության ցանկ

1. *Դաշտային ազգագրական նյութեր*, Հայկ Հակոբյան (անտիպ):
2. *Դաշտային ազգագրական նյութեր*, Հայկ Հակոբյան, Լիլիթ Սիմոնյան, Կարեն Հովհաննիսյան (անտիպ):
3. *Դաշտային ազգագրական նյութեր*, Ա. Օհանջանյան, Շ. Խաչատրյան, Գ. Հարությունյան, Հ. Հակոբյան (անտիպ):
4. **Թումանյան Գ.**, Աշտարակի Խոջարաղերի ուշ բրոնզեդարյան գերեզմանները, *ՊԲՀ*, h. 1, 1999, էջ 249–262:
5. **Խաչատրյան Ժ.**, *Արփաշատ II*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ. Հնագիտ. և ազգագր. ին-տ, 1981:
6. **Մանանդեան Հ., Աճառեան Հր.,** *Հայոց նոր վկաներ*, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի,1903, էջ 560–561:
7. **Бакушев М.А.**, Обряд порчи инвентаря в погребальных памятниках Дагестана албано-сарматского времени, *Вестник института ИАЭ*, 3, 2005, с. 42–50.
8. **Кореневский С. Н.,** Традиция порчи сосуда: истоки по данным археологии предкавказья, *История, археология и этнография Кавказа*, т. 17 (4), 2021, с. 886–911.
9. **Костанян Е.**, Обряд тризны в Боспорских курганах, *Советская археология*, т. 14, 1950, с. 124–138.
10. **Пропп В. Я.**, *Исторические корни волшебной сказки*, Ленинград, Изд. Ленинградского университета, 1986.
11. **Церен Э.**, *Библейские холмы*, Москва, Изд. «Наука», 1966.

Ընդունվել է՝ 03.11.2023
Գրախոսվել է՝ 18.11.2023
Հանձնվել է տպ.՝ 12.03.2024